

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ս. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ «ԱՆԴՐԱԿՈՎԿԱՍԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ ՄԻԱՍՏԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX Դ. ՍԿԶԲՈՒՄ»

Հայկական ՍՍՌԻ ԳԱ հրատարակչությունը լույս էնծայեց պրոֆ. Արզար Հովհաննիսյանի «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միջազգային հարաբերությունները XIX դարի սկզբին» մենագրությունը՝ ուսանողներին լեզվով:

Անդրկովկասի Ռուսաստանին միանալու պատմական իրադարձության մասին անցյալում րազմաթիվ մենագրություններ և հոդվածներ են գրվել: Սակայն այս հարցի շուրջը խմորված միջազգային հարաբերությունները համարյա բոլոր այդ աշխատություններում տրվել են շատ համառոտ և ընդհանուր գծերով, որպես ֆոն: Այդ բացը չբացնում է պրոֆ. Ա. Հովհաննիսյանի սույն աշխատությունը, ուր հեղինակը լուսաբանում է Անդրկովկասյան ժողովուրդների և նրանց հարևան երկրներ՝ Թուրքիայի և Իրանի XIX դարի սկզբի պատմությունը՝ միջազգային բարդ հարաբերությունների շրջանակում: Այս հանդամանքը աշխատության հիմնական արժանիքն է: Պետք է նշել, որ Արևմտյան Եվրոպայի երկրների պատմությանը նվիրված աշխատություններում, նույնպես, անհրաժեշտ չափով չեն լուսաբանված XIX դարի սկզբներին Եվրոպական տերությունների, հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի մղած պայքարը Իրանում և Թուրքիայում ընդդեմ Ռուսաստանի, ինչպես նաև այդ տերությունների ներքին հակասությունները: Այս իմաստով Ա. Հովհաննիսյանի աշխատությունը ոչ միայն նշանակալից ներդրում է Անդրկովկասի ժողովուրդների XIX դարի սկզբների պատմության լուսաբանման գործում, այլև մեծ հետաքրքրություն է ներկայացնում Իրանի և Թուրքիայի, ինչպես նաև Անգլիայի ու Ֆրանսիայի նոր պատմության այդ կարևոր էտապի լուսաբանման համար:

Ա. Հովհաննիսյանի աշխատությունը բաղկացած է առաջաբանից և յոթ գլուխներից (446 էջ):

Գլուխները ընդգրկում են միջազգային այդ հարաբերությունների տարբեր էտապները: Այսպես, առաջին գլխում խոսվում է 1796 թ. Իրանում ֆրանսիական միսիայի մասին, այնուհետև նկարագրվում է անգլիական դիվանագիտական գործունեությունն Իրանում՝ ազդեցությունն ձեռք բերելու համար և Անգլիայի ու Ֆրանսիայի միջև մղված պայքարը 1801—1806 թթ.: Հաջորդ գլխում խոսվում է Գարդանի դեսպանության և նրա անհաջող վարձանի մասին: Այնուհետև առանձին ուշադրություն է նվիրվում 1809 թ. կնքված Անգլո-իրանական պայմանագրին, որից հետո Անգլիայի ազդեցությունը Իրանում համարյա դերիշխող է դառնում: Հատուկ գլուխ է հատկացված Անդրկովկասյան իրադարձություններին՝ 1812 թ. Հայրենական պատերազմի կապակցությամբ: Վերջին գլուխը նվիրված է Գյուլիստանի պայմանագրին և մինչև 1813 թ. տեղի ունեցած իրադարձություններին:

Անդրկովկասը Ռուսաստանին միանալու շուրջը ստեղծված միջազգային բարդ հարաբերությունների պատմության վերաբերյալ եղած աղբյուրները մեծավ մասամբ օտար լեզուներով են: Պրոֆ. Ա. Հովհաննիսյանը ոչ միայն օգտագործել է այդ աղբյուրներն ու ընդարձակ դրականությունը, այլև հանդես է բերել դիվանագիտական բարդ արվեստի վերաբերյալ իր ունեցած լուսատեղյակությունը:

Հեղինակը օգտագործել է ֆրանսիական և անգլիական դեսպանների, միսիանների անդամների և ճանապարհորդների, իրանական բանակում ծառայող Եվրոպացի զինվորականների հուշեր, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուներ, պաշտոնական խրոնիկաներ,

¹ А. Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.

արխիվային նյութեր, ձեռագրեր, ինչպես նաև ուսումնասիրողների բազմաթիվ աշխատություններ:

Ծիշտ է, աշխատության մեջ չեն օգտագործվել թուրքերեն և պարսկերեն լեզուներով եղած աղբյուրներն ու գրականությունը, բայց դրանից աշխատությունը առանձնապես չի տուժել: Նախ այն պատճառով, որ այդ երկրներում եղած ղրվանագիտական արխիվային փաստաթղթերը, որոշ բացառությամբ, դեռևս չեն հրատարակվել և երկրորդ՝ պարսիկ և թուրք հեղինակների աշխատությունները համարյա ամբողջովին զրված են ֆրանսիական և անգլիական աղբյուրների և գրականության հիման վրա, որը ինչպես նշեցինք, ամենալայն կերպով օգտագործվել է սույն աշխատության հեղինակի կողմից:

Օգտագործելով վերոհիշյալ հարուստ գրականությունն ու արխիվային նյութերը՝ Ա. Հովհաննիսյանը ոչ միայն գիտական բարձր մակարդակով տալիս է XIX դարի սկզբներին Անդրկովկասի շուրջ ծավալված միջազգային հարաբերությունների խոր վերլուծությունը, այլև համոզիչ կերպով հերքում է վաղուց ի վեր պատմության մեջ տեղ գտած և բավականին հնացած ու կրկնված մի շարք կոնցեպցիաներ, և տալիս է նոր մեկնաբանություններ: Բերենք մի քանի օրինակ:

Պատմության մեջ երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը, որ Անգլիան ու Ֆրանսիան XIX դարի սկզբներին Արևելքում պայքարում էին Ռուսաստանի դեմ միայն այն տարիներին, երբ նրանք թշնամական հարաբերությունների մեջ էին վերջինիս հետ: Հենվելով պատմական փաստերի վրա, հեղինակն ապացուցում է, որ Անգլիան ու Ֆրանսիան Արևելքում անշեղորեն ու հետևողականորեն վարում էին հակառուսական քաղաքականություն՝ անկախ Սվրուպայում Ռուսաստանի հետ ունեցած իրենց հարաբերություններին: Բազմաթիվ և հարուստ փաստերով հեղինակը ցույց է տալիս, որ մինչև իսկ այն տարիներին, երբ Անգլիան կամ Ֆրանսիան պաշտոնապես համարվում էին Ռուսաստանի դաշնակիցներ, թուրքիային և իրանին անընդհատ զրգոում էին Ռուսաստանի դեմ և ամեն տեսակի օգնություն էին ցույց տալիս իրանական իշխող շրջաններին՝ Անդրկովկասի նկատմամբ իրենց ագրեսիվ նպատակներն իրականացնելու համար: Ֆրանսիան իրանում հսկառուսական դավադրություններ էր հյուսում ոչ միայն մինչև Տիլզիտի պայմանագրից, այլ նաև Ռուսաստանի հետ դաշինք կնքելուց հետո: Հենց 1807—1809 թթ. էր, որ ֆրանսիական միսիանային զործունեությունն ծավալեց իրանին ռազմական օգնություն ցույց տալու ուղղությամբ: Իսկ անգլիացիները իրանական բանակին զենք էին տրամադրում դեռևս 1804—1805 թթ., երբ նրանք ամենասերտ հարաբերությունների մեջ էին Ռուսաստանի հետ (էջ LIV): Այսպիսով հեղինակը հերքում է նաև այն սխալ մեկնաբանությունը, որ իբրև անգլիացիները սկսեցին իրանին ռազմական օգնություն ցույց տալ միայն 1809 թ. սկսած, երբ Ռուսաստանը, Տիլզիտի պայմանագրից հետո Ֆրանսիայի դաշնակիցը դառնալով, Անգլիայի հետ պատերազմական դրություն մեջ էր (էջ 17): Հեղինակը հարուստ փաստերով ապացուցում է, որ ռուս-պարսկական պատերազմի հենց սկզբից անգլիացիները ռազմական օգնություն էին ցույց տալիս իրանին, չնայած որ Ռուսաստանի հետ ամենասերտ հարաբերությունների մեջ էին:

Այնուհետև ժխտվում է անգլիական թուրքական պատմագրության այն կեղծ կոնցեպցիան, որ իբրև Անգլիան XVIII—XIX դարերում ոչ մի ագրեսիվ նպատակներ չի ունեցել իրանի ու Անդրկովկասի նկատմամբ, և նրա միակ հոգսը եղել է կասեցնել Ռուսաստանի էքսպանսիան դեպի Արևելք՝ Հնդկաստանի ուղղությամբ, և հենց այդ պատճառով էլ Անգլիան հովանավորել և օգնել է իրանին՝ պաշտպանելու իր անկախությունը և տերիտորիալ ամբողջականությունը: Հարցի նման մեկնաբանումը ոչ միայն անընդհատ կրկնվել է անցյալում, այլ մինչև իսկ ամենալայն կերպով կիրառվում է ժամանակակից բուրժուական պատմագրության մեջ:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա բուրժուական պատմագրությունը աշխատում է ձևացնել, որ իբրև թե մինչև Տիլզիտի հաշտությունը իրանը հետաքրքրել է Ֆրանսիային Ռուսաստանի դեմ նրա մղած պայքարում, իսկ զրանից հետո էլ որպես դեպի Հնդկաստան տանող ուղու վրա ընկած երկիր (էջ LV):

Հեղինակն ապացուցում է, որ զործնականում ինչպես Ֆրանսիան, այնպես էլ Անգլիան ամենևին էլ չէին պաշտպանվում, այլ հարձակվում էին: Նրանք ձգտում էին թուլացնել Ռուսաստանի դերը Արևելքում և կասեցնել Անդրկովկասի միացումը Ռուսաստանին: Միաժամանակ նրանք ձգտում էին թե՛ քաղաքական, և թե՛ տնտեսական տեսակետից իրենց գերիշխանությունը հաստատել իրանում (էջ LV):

Բերենք մի ուրիշ օրինակ: Պատմագրության մեջ, այդ թվում և սովետական որոշ հեղինակների մոտ, իշխել է այն միակողմանի կարծիքը, թե իբր 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը ծագել է այն պատճառով, որ Ռուսաստանը ցանկացել է Վրաստանից հետո դրավել ամբողջ Անդրկովկասը, և որ իրանական իշխող շրջանները որոշել են պատերազմ սկսել միայն այն բանից հետո, երբ ռուսական զորքերը զբաղվել են Գան-ճայի խանությունը:

Հեղինակը վերանայում է նաև այդ տեսակետը: Չժխտելով ցարական Ռուսաստանի մտադրությունը՝ աստիճանաբար ամբողջ Անդրկովկասը Ռուսական կայսրության սահմաններում ներգրավելու ուղղությամբ, հեղինակը բաղձաթիվ փաստերով ապացուցում է, որ Իրանը, իր հերթին, չհաշտվելով Վրաստանը Ռուսաստանին միանալու փաստի հետ, սլատաստվում էր ներխուժել Վրաստան: Հենց այդ նպատակով էր, որ հատուկ ներկայացուցիչներ ուղարկեցին Կ. Պոլիս՝ կաղմակերպելու Ռուսաստանի դեմ Թուրքիայի և Իրանի համատեղ հանդես դալու գործը:

Եթե Ռուսաստանը նույնիսկ բավարարվեր միայն Վրաստանի միացումով, միևնույն է, նա չէր կարող խուսափել Իրանի դեմ պատերազմից: Այդ հարցում վճռական դեր խաղաց նաև Անգլո-Իրանական պայմանագիրը և անգլիացիների հովանավորությունը (էջ 69—73):

Այնուհետև հեղինակը շտկուժներ է մտցնում նաև մի շարք պատմական փաստերի մեկնաբանության խնդրում: Օրինակ, Ֆրանսիական ղեկանադիրությունը աշխատում էր Ռուսաստանին հավատացնել, որ Գարդանի միսիան Իրանում ուներ միայն մի նպատակ՝ նախապատրաստել Ֆրանս-ռուսական միացյալ արշավանքը ղեկավարելու հետևաբար նա նույնպես Ռուսաստանի շահերին էր նպաստում, որքան և Ֆրանսիայի շահերին: Նապոլեոնյան ղեկանադիրության այդ կեղծիքը իր արտահայտությունն է գտել նաև Ֆրանսիական պատմագրության մեջ և մինչև իսկ սովետական որոշ հեղինակների աշխատություններում (էջ 186):

«Գարդանի ղեկանադիրությունը» գլխում (էջ 143—206) հեղինակը ցույց է տալիս Գարդանի միսիայի հետապնդած նպատակները և նրա բացասական դերը Անդրկովկասը Ռուսաստանին միանալու գործում: Նշելով, որ Ֆրանսիական քաղաքականությունն Իրանում, քրտեղ Գարդանի ղեկանադիրությունը համառ ղեկավարություն էր ցույց տալիս Անդրկովկասի միացմանը Ռուսաստանին, չէր կարող չնպաստել Ֆրանս-ռուսական հարաբերությունների հետագա թուլացմանը, հեղինակը հերքում է նաև Ֆրանսիական բուրժուական պատմագրության այն պնդումը, որ իբր Ֆրանս-ռուսական դաշինքի թուլացման և 1812 թ. պատերազմի ամբողջ մեղքն ընկնում է Ռուսաստանի վրա (էջ 206):

Վերջապես մի ուրիշ օրինակ ևս: Պատմագրության մեջ գոյություն ունի այն տեսակետը, որ իբր Նապոլեոնը Իրանի վրա ուշադրություն դարձրեց 1804 թ. միայն, կամ լավագույն դեպքում 1803 թ. վերջերին: Հեղինակն ապացուցում է, որ այդ տեսակետն իրականության չի համապատասխանում, և որ Թուրքիայի հետ հաշտության պայմանագրից անմիջապես հետո Նապոլեոնը միջոցների գիմեց Իրանի հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ (էջ 56):

Վերջում ցանկանում ենք նշել, որ ելնելով աշխատության վերնագրից, սպասվում էր, որ հեղինակը պիտի ընդգրկեր մինչև 1828 թվականը ծավալված իրադարձությունները, բանի որ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, ինչպես հայտնի է, ավարտվեց միայն 1828 թ.՝ Թուրքիայի պայմանագրով: Հեղինակի հետ միանգամայն համաձայն լինելով, որ 1815 թ. վերջում է Ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի և Նապոլեոնյան պատերազմների հետ կապված միջադեպին հարաբերությունների էպիսոն, և որ հետագա շրջանում եվրոպական պետությունների պայքարը Արևելքում ընթանում է միջազգային նոր իրադրության պայմաններում (էջ 446), պարզ չի սակայն, թե ինչու աշխատությունն ավարտվում է 1815 թ.: Գուցե սույն աշխատությունը մենագրության միայն առաջին հատորն է. այդ դեպքում հուսանք, որ մոտ ժամանակներս կհրատարակվի նաև 1815—1828 թթ. ընդգրկող ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների պատմությունը:

Դիտողության կարգով ցանկանում ենք նշել, որ նման լուրջ աշխատության համար անհրաժեշտ էր, որ վերջում կցված լինեին անվանացուցակ և գրականության ցանկ:

Անհրաժեշտ է նշել, որ Ա. Հովհաննիսյանի սույն աշխատությունը զբաղված է զեղեցիկ և անսեթեթև ոճով, սահուն ու պատկերավոր լեզվով. այն կարդացվում է մեծ հետաքրքրությամբ:

Ն. ԵԳԱՆՑԱՆ

Ս. ԱՐԵՇՅԱՆ «ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ՑԱՐԱԿԱՆ ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»¹

Գրախոսվող մանուկների հեղինակի տաճարային գիտական տրամաբան հետազոտությունները արդարև է և ստեղծվել է մեծ քանակությամբ արխիվային և այլ նյութերի խորազնի ուսումնասիրության հիման վրա:

Փրքում բազմակողմանիորեն ուսումնասիրված է հենարանական Պետական Պատմական Արխիվի Հենինգրադի ֆիլիալի նյութերը, հատկապես նրա Պետերբուրգի համալսարանի և Պետերբուրգի հայ-գրիգորյան հոգևոր կառավարչության ֆոնդերը, որոնք պարունակում են մեծ քանակությամբ փաստաթղթեր հայ մամուլի, գրաքննության վերաբերյալ և հարկ եղած չափով մինչև այժմ չեն ուսումնասիրվել և մշակվել: Հեղինակը բազմակողմանիորեն ուսումնասիրել է Հատմանական ՄԱԹ Կենտրոնական Պետական Պատմական Արխիվը, որը պարունակում է արժեքավոր փաստաթղթեր Ք. Արուսյանի, Սա. Նազարյանի, Դոգոյանի, Պատկանյանի և ուրիշների կյանքի և գործունեության վերաբերյալ: Փրքում ուսումնասիրված են նաև Մոսկվայի մարզային Պետական Պատմական Արխիվի այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են Հաղարյան ինստիտուտին և պարունակում են արժեքավոր նյութեր հայ կուլտուրայի գրեթե այն բոլոր գործիչների մասին, որոնք եղել են Մոսկվայում:

Գրախոսվող գիրքը սկսվում է «Հայկական գաղութները Ռուսաստանում» գրքի տպագրության սկզբը և գրաքննության ստեղծումը՝ գլխով, որի մեջ ցույց է տրվում այն բացառիկ կարևոր դերը, որը խաղացել են Ռուսաստանում եղած հայկական գաղութները հայ մտղոթի կյանքում, նրա կուլտուրայի զարգացման տպագրում: Գրեթե բոլոր գաղութները ունեին իրենց տպարանները, հայերեն տպարանական հրատարակություններ և հայերեն լեզվով գրքեր էին հրատարակվում Ռուսաստանի շատ քաղաքներում: Պետերբուրգի և Կազանի համալսարաններում, Մոսկվայի Հաղարյան ինստիտուտում մեծ ուշադրություն էր նվիրվում հայագիտության զարգացմանը և հայերեն լեզվի, գրականության, պատմության որակյալ մասնագետների պատրաստմանը:

Քիսական մամուլը Հայաստանի մասին և գրաքննության մի քանի հարցերը զբաղում հանգամանորեն վերլուծվում են ռուսական այն բոլոր աղբյուրները, որոնց մեջ խոսվում է հայերի և Հայաստանի մասին: Այդ գլխում, այնուհետև ցույց է տրվում այն առաջինները, որ խաղացել է ջարակյան գրաքննությունը հայ կուլտուրայի բնագավառում: Հայ հրատարակական մտքի զարգացումը կաշկանդված էր ջարակյան գրաքննության շղթաներով: Յարական, ամեն մի ազատ միտք դաժանորեն խեղդող գրաքննությունը արգելեց «Վերք Հայաստանի»-ի տպագրությունը, և հայ մեծ լուսավորիչ Ք. Արուսյանը շեղարդացավ իր հենդանության օրոք տեսնել իր անմահ ստեղծագործությունը տպագրել վիճակում:

Փրքի հեղինակը իրավացիորեն քննադատում է անխիղճ բոլոր գրաքննիչներին ուսուցիչներին համարելու տեսակետը: Այդ կապակցությամբ նա վկայակոչում է ռուս գրականության նշանավոր ներկայացուցիչներ՝ Ս. Տ. Ակսակովին և Ի. Ա. Գոնչարովին, որոնք միաժամանակ լինելով գրաքննիչներ, նպաստել են Հայաստանի մասին առաջին լեզվով հրատարակվող մի շարք արժեքավոր գրքերի հրատարակմանը:

Փրքում անմիջապես փաստերի հիման վրա ցույց է տրվում, որ «Հյուսիսափայլ»-ը և մասնավորապես Միք. Նալբանդյանը, կաշկանդված ջարակյան գրաքննության կողմից, ազատորեն չէին կարողանում պրոպագանդել իրենց առաջնորդ քաղաքական, ազգայնագիտական և փիլիսոփայական հայացքները: Եվ Նալբանդյանը ստիպված էր իր նյութերը ազգային արտասահմանյան մամուլում: Հեղինակը իրավացիորեն ընդգծում է, որ «Հյուս-

¹ Հայկական ՄԱԹ ԳԱ-ի հրատարակչության, 1957, 501 էջ: